ոչ թէ խմբագրական մասնաժողովի մէջ, այլ ընկերութեան վարչութեան մէջ, և երկրորդ եթէ նրանք ընտրվէին խմբագրական մասնաժողովի մէջ, նրանք գուցէ աւելի մեծ օգուտ կարող էին բերել, քան թէ այժմեան ընտրվածներից շատերը։ Օրինակ, Գ. Միրզոյեան ոչ թէ միայն ընկերութեան երեք հիմնադիրներից մէկն է, բայց նա անձամբ աշխատակցել է հայոց մանկավարժական մի քանի գրքերի հրատարակութեան գործի մէջ։ Նա, ոչման մեզ յայտնի է, այն երեք անձինքներից մինն է, որոնք նորերումս թարգմանեցին և հրատարակեցին այն մի քանի գրքերը, որոնք միաք տուեցին թարգմանական ընկերութեան հիմնվելուն։

—

Մեզ հաղորդում են ՇՈՒՇՈՒՅ, որ վերջին օրերումս ցրտի սաստկութիւնը և նոր եկած ձիւները բոլորովին կտրեցին քաղաքի յարաբերութիւնները շրջակայ գիւղերի հետ։ Այս պատճառով թէ հացը և թէ կենսական ուրիշ պէտքերը չափազանց թանգացել են։ Ցրտերը այնքան սաստիկ էին, որ ճանապարհների վրա գտնվեցան մարդկանց սառած դիակներ։

—

Ստացանք պ. Յովակիմ Գէորգեանի ձեռքով 409 ռուբլ, որ հաւաքվեցաւ Երևանում յօգուտ վանի սովատանջների։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Կ ո զ լ օ վ ի ց, Արծրունու թատրոնում մարտի 16-ին յօգուտ վանի սովատանջների նրա տուած ներկայացումից, բոլոր ծախսերը դուրս եկած, 3 ռուբլ 44 կոպէկ։ Պ. Կոզլով ներկայացրեց մեզ իր սեփական ծախսերի մանրամասն հաշիւը։ Թատրոնը ձրի էր տուած, այսինքն ոչ թէ միայն վարձ չը վեր արին, բայց և գանվիճի գիշերվայ բոլոր ծախսերը թատրոնի տէրերը իրանք վճարեցին։

—

Թիֆլիսանակ պ. Նիկողայոս Միսկինեանց ուղարկեց մեզ 5 ռուբլի յօգուտ վանի սովատանջների։

—

Երէկ, մարտի 18-ին դարձեալ ուղարկեցինք Կ. Պոլիս, Կիւլպէնկեանի առևտրական տան ձեռքով 2000 ռուբլ յօգուտ Հայաստանի սովատանջների։ Վերջին անգամ փողը ուղարկելուց յետոյ, մեում էր խմբագրութեան մէջ 239 ռուբլ 42 կոպ.։ Դրանից յետոյ հաւաքվեցաւ զանազան տեղերից 723 ռ. 59 կ., որ յիշեալ 239 ռ. 42 կ. հետ և Աստրախանից ստացած 1100 ռուբլ գումարի հետ միասին կանի 2063 ռ. 1 կոպ.։ Այդ գումարից 2000 ռուբլ ուղարկելուց յետոյ և հեռագրի ծախսը 3 ռ. 25 կոպ. վճարելուց յետոյ, մեում է խմբագրութեան մէջ 59 ռ. 76 կոպ.։ Ուրեմն փետրվարի կէսից մինչև այժմ ուղարկեցինք յօգուտ վանի սովատանջների ընդամենը 16,000 ռուբլ։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են հետևեալը։ «Մի գիւղացի հայ տալիս է մի թուրք գիւղացու իր մի քանի զոյգ եզները պահելու մինչև գարնան բացվելը։ Այժմ, ողորմելին չը կարողանալով վճարել իր եզները պահելու վարձը, եթէ մինչև անգամ ծախելու լինէր իր եզները,—սոխվեցաւ թողնել իր եզներին նրանց պահող թուրքի մօտ որպէս կենդանիներին ձմռանվայ պահելու վարձ։»

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, որ այդտեղի հացի կարօտ չքաւորներին օգնելու համար հաւաքված է մօտ 300 ռուբլ գումարը։

—

Գաւառական մի քանի քաղաքներից մեզ գրում են որ «Մշակի» № 25-ի առաջնորդող յօդուածը «Հասարակական բարոյականութիւն» վերնագրով, շատ լաւ տպաւորութիւն է գործել գաւառներում։ Մեզ գրում են որ գաւառներումն էլ հայ վաճառականների մէջ յաճախ պատահում են այդ տեսակ խաբէութիւններ. հէնց որ վաճառականը տեսնում է թէ չէ կարող իր պարքերը վճարել, խոյսն հաստատում է իր խանութի մէջ եղած ապրանքները ուրիշի անունով։ Պարտատէրը զբնում է կրպակը փողերը պահանջելու, բայց յանկարծ իմանում է որ կրպակը մի ուրիշն է պատկանում։ Թղթակիցներից մինը աւելացնում է. «Դժբաղդաբար վատ օրինակը շատ հետևողներ է գտնում և բնականաբար վնասվում է միայն ազնիւ և պատուաճանաչ մարդը, որ այդ տեսակ միջոցներ գործ դնել չէ կամենում։»

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ։ «Անցեալ փետրվար ամսի 25-ից բացվեցաւ Երևանում պ. Ա Մինասեանցի «փոխանակագիրների գրասենեակը» (Вексельное Бюро)։ Զարմանալի է որ մինչև այժմ ոչ «Մշակի» մէջ, ոչ էլ այլ թերթերում չենք կարդում ոչ մի լուր այդ բիւրօի հիմնելու մասին, որ Երևանի համար նոր բան է և գուցէ նրա նըմանը չը կայ և կովկասեան այլ քաղաքներում։ Այդ Բիւրօ մեծ նշանակութիւն ունի թէ հասարակ ժողովրդի, թէ ծառայողների և թէ արհեստաւորների դասի համար, որոնք կարօտ են դրամական օգնութեան, կարօտ են արժան կրեդիտի։ Բիւրօի գործողութիւններն են. 1) վէկսէլներով (փոխանակագրով) դրամ պարտ տալը, մաս առ մաս վճարելու պայմանով։ 2) Առևտրական վէկսէլների ուչօտ (հատումն) անելը։ 3) Զանազան առևտրական յանձնարարութիւններ կատարելը։ 4) Ուրիշների վէկսէլներով դրամ ստանալը և ըստ պատկանելոյն հատուցանելը։ 5) Զանազան պարտամուրհակներ գնելը, ծախելը և փոխադրելը և այլն։ Վերոյիշեալ գործողութիւնների առաջին կէտը, որ գլխաւոր նշանակութիւն ունի «Բիւրօի» նպատակի համար ևս, շատ ուրախալի է մեր ժողովրդի համար, որովհետև նախ համեմատաբար շատ չափաւոր տոկոս է պահանջում պ. Մինասեանց, իսկ երկրորդ ամսական վճարելը ամենադիւրին պայման է ծառայողների համար։ Վերջապէս արհեստաւորներին թոյլ է տրվում վճարել և շաբաթական։ Արդարութիւնը պահանջում է յիշել որ այդպիսի նոր դրամական աղբիւր առաջին անգամ Երևան քաղաքի մէջ բանալը պատիւ է բերում պ. Մինասեանցին և մենք անկեղծ սրտով աջողութիւն ենք ցանկանում նրա գործին։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Գերմանական պարլամենտին ներկայացրած զինուորական նոր օրէնքի մասին լրագրերումս հետևեալ տեղեկութիւններն ենք կարդում։

Գերմանական պարլամենտի մէջ զինուորական նոր օրէնքի մասին եղած վիճաբանութիւններից երևում է, որ կառավարութեան ներկայացրած օրէնքի նախագիծը կընդունվի։ Այդ օրէնքը պաշտպանեցին պարլամենտի թէ ազգային-ազատամիտ և թէ պահպանողական կուսակցութիւնները։ Ճշմարիտ է ընդդիմադրողական կուսակցութեան անդամները նկատեցին, որ ժողովրդի համար ծանրութիւն կը լինեն զինուորական նոր ծախսերը և կասկած յայտնեցին զօրքերի ուժեղացնելու անհրաժեշտութեան մասին, քանի որ արտաքուստ Գերմանիային ոչինչ վտանգ չէ սպառնում, բայց ինչպէս երևում է այդ նկատողութիւնները առանց հետևանքի կը մնան։ Այդ կուսակցութիւնը այնքան միայն կարողացաւ անել, որ օրէնքը յանձնվեցաւ 21 անդամներից բաղկացած յանձնաժողովի քննութեանը, որը, եթէ չը կարողանայ փոփոխել օրէնքը, գոնեա կուղղի նրան։ Ինչպէս յայտնի է, այդ օրէնքը պարլամենտին ներկայացնելուց առաջ, իշխան Բիսմարկի պաշտօնական լրագրի մէջ մի յօդուած տպվեցաւ, որ մատնացոյց էր լինում Ռուսաստանի դիտաւորութեան վրա իր արևմտեան սահմանի վրա մի քանի ամրոցներ կառուցանելու մասին և այդ հիման վրա տեղիք էր տալիս մտածելու, որ մօտ ապագայում Գերմանիան գուցէ սնոտված կը լինի պատերազմել Ռուսաստանի հետ։ Այդ յօդուածը, որի բովանդակութիւնը հետագիրը ամեն տեղ հաղորդեց, չափազանց ծանր տպաւորութիւն գործեց, մանաւանդ Գերմանիայում։ Այդ տպաւորութիւնը այնքան ուժեղ էր, որ միւս օրը նոյն լրագրի մէջ արժանահաւատ աղբիւրից ծագած մի պատասխան տպվեցաւ, որ ապացուցանում էր, թէ Ռուսաստանը նոյնքան իրաւունք ունի ամրացնել իր արևմտեան սահմանը, որքան Գերմանիան իր արևելեան սահմանը և որ եթէ Ռուսաստանը հարկաւոր է համարում ամրացնել իր արևմտեան սահմանները, այդ չէ նշանակում, որ նա պատերազմական դիտաւորութիւններ ունի Գերմանիայի վերաբերութեամբ։

Որքան առաջին յօդուածը վատ տպաւորութիւն գործեց և երկիւղ գցեց գրեթէ բոլոր բօրսաների վրա, նոյնքան երկրորդը լաւ ազդեցութիւն ունեցաւ և հանգստացրեց բօրսաները։ Մի քանիսը հաւատացնում էին որ այդ յօդուածները տպվեցան բօրսայում տատանումն գործելու համար, բայց տիներև է, որ իշխան Բիսմարկի պաշտօնական թերթը երբէք չէ կարող բօրսայի խնդիրներին ծառայել, այլ այդ յօդուածների երևալը ուրիշ պատճառ պէտք է ունենար։ Արդեօք ի՞նչ էր յիշեալ յօդուածների տպագրութեան պատճառը։

Մի ուրիշ կարծիք ևս, որ իբր թէ յօդուածների նպատակն էր ստիպել պարլամենտին, որ նա ընդունի զինուորական նոր օրէնքը, նոյնպէս սխալ է, որովհետև իշխան Բիսմարկ պէտք է իմանար, որ ազգային-ազատամիտ կուսակցութիւնը առանց այդ յօդուածների էլ կը պաշտպանէր նոր օրէնքը։ Ինչ և իցէ յիշեալ յօդուածները սաստիկ շփոթեցին թէ ազատամիտ և թէ պահպանողական կուսակցութիւնների անդամներին։ Գերմանական լրագրները, մասնացոյց լինելով հասարակական կարծիքի վրդովման վրա, անհրաժեշտ էին համարում յիշեալ յօդուածների ծագման մեկնութիւնը։ Մի քանի լրագրներ մինչև անգամ յայտնեցին, որ առաջին յօդուածը Գերմանիային նոր պատերազմի մէջ խառնելու դիտաւորութեամբ էր գրված։ «Presse» լրագիրը այդ մասին հետևեալ դատողութիւններ է տալիս։ Այժմ Բերլինում քաղաքական երկու հոսանքներ են նկատվում։ Մէկին ուղղութիւն է տալիս իշխան Բիսմարկ, միւսին պալատը։ Առաջինը անհրաժեշտ է համարում Գերմանիայի և Ռուսաստանի յարաբերութիւնները բոլորովին փոփոխել, երկրորդը Ռուսաստանի բարեկամութիւնը Գերմանիայի արտաքին քաղաքականութեան գլխաւոր նպատակն է համարում։ Այդ գրութեանը վերջ դնելու նպատակով իշխան Բիսմարկ հրամայել էր տալ առաջին յօդուածը, որ անբաւականութիւն յարուցեց ինչպէս պալատական, նոյնպէս զինուորական բարձր շրջաններում։ Միւս յօդուածը «Presse» լրագրի կարծիքով Մոլտկէի գրչին է պատկանում։ «Այսպէս թէ այնպէս, աւելացնում է «Presse», հազիւ թէ իշխան Բիսմարկ զինուներ անի հակառակ կուսակցութեանը։ Թագաժառանգը նրա հզօր դաշնակիցն է, նրա կողմն են գերմանական զօրքերը և վերջապէս Գերմանիայի պետական առողջ դատողութիւնը։ Վերջ ի վերջոյ իշխան Բիսմարկ, ինչպէս միշտ եղել է, այս անգամ էլ յաղթող կը հանդիսանայ։»

Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԷՄԷՐՃԻ

—

Այս անձն երկար ժամանակ Այնթապի առաջնորդական պաշտօնը վարելէ ետև իբրև Մկրտիչ եպիսկոպոս, 1865-ին, երբ Սսոյ Կիրակոս Բ. Կաթողիկոսը կը վախճանի, Պոլիս կուգայ կաթողիկոսական ընտրութեան խնդրոյն պատճառաւ, և Նիկողայոս եպիսկոպոսին ինքնընտիր կաթուղիկոս օծուելուն դէմ բողոքողներէն մին կը լինի. 1866-ին սկիզբները Կագր. Վարչութեան որոշմամբ Սսոյ Կաթուղիկոսութեան Տեղապահ կարգուելով Ատանա կերթայ. հոն տարի մը չափ պաշտօն վարելէ ետև, իւր անկարգ ընթացքը ժողովուրդը կը դժգոհեցնէ և Պոլիս կը կոչուի, բայց չը գար, և Ազգ. Վարչութիւնը կը պարտաւորի Բ. Դոնէն հրամանագիր առնուլ՝ կառավարութեան զօրութեամբ Կ. Պոլիս բերելու համար։ Այն ատեն յիշեալ եպիսկոպոսը խոյս կուտայ և Բոլոքականութիւնն ընդունելով կը բաժնուի Հայոց ազգէն։ Եւ որովհետև, ինչպէս Այնթապի առաջնորդութեան ժամանակ տեսնուած էր, կուսակրօն կեանքն անտանելի լինելով այդ եպիսկոպոսին, ամուսնանալու բայց և միանգամայն եպիսկոպոս մնալու կը փափաքէր, և այս ալ կարելի բան չէր Հայաստանեայց եկեղեցոյ մէջ, իւր նպատակին հասնելու համար անգլիական եկեղեցոյ կը յարի և կամուսնանայ։ Ասոր վրա Հոգելոյս Պօղոս Պատրիարք յատուկ կոնդակ կարգէն լուծեալ կը հրատարակէ զՄկրտիչ եպիսկոպոս, որ կը լինի ըստ առաջնոյն Սէմէրճի Պ. Մարտիրոս։ Սակայն Պ. Մարտիրոս իւր Հայ եկեղեցականի կերպարանքը չը փոխելով, Պատրիարքարանը կը պարտաւորի բողոքել առ Բ. Դուռն և հրամանագիր ղրկել կուտայ։ Ասոր վրա Պ. Մարտիրոս Խաչ նշան մը կը դնէ իւր գլխարկին վրայ Հայոցմէ տարբերելու համար։ Իսկ Պատրիարքարանն առիթ ալ գոհ չը լինելով դարձեալ կը բողոքէ։ Միանգամայն իւր վրայ ամբաստանութիւն լինելով թէ Սսոյ Աթոռոյն պատկանեալ իրաւունքներէն բաւական զուրկ մը իւր կոկորդն անցուցած է, ասոր համար ալ Պատրիարքարանը կը բողոքէ և հաշիւ առնելու համար Բ. Դռնէն հրամանագիր ղրկել կուտայ Սսոյ այժմեան Տ. Մկրտիչ կաթուղիկոսը համարառու կարգելով։ Սակայն այս համարառութեան արդիւնքն ինչ եղած լինիլը ցարդ տեղեկագրված չէ Պատրիարքարանի։

Ահա ասոնք են յիշեալ Սէմէրճի Պ. Մարտիրոսին ի Բողոքականութիւն դիմելուն պատճառները, զորս Պատրիարքարանի արձանագրութիւններէն քաղեցինք, և յորոց բացայայտ կը տեսնուի, թէ կրօնափոխութիւնն իւր անկարգ ընթացից և Ազգ. Պատրիարքարանի դէմ ըրած ըմբոստութեան հետևանքն եղած է և ոչ կրօնական համոզման, ինչպէս որ կը ընդունեցնելու եղած է Անգլիացւոց։ Դժբաղդաբար, իւր խօսքին նայելով, Այնթապի մէջ երեք հարիւր հոգիի չափ իրեն հետևողներ ունեցեր է, և Անգլիացւոցմէ չորս հարիւր ոսկիի չափ ստակ հաւաքեր, եկեղեցի մը շինելու ձեռնարկեր, և հիմերը ձգելէ ետև ստակներն հատնելով Անգլիա գնացեր է հազար երկու հարիւր ոսկիի չափ գումար մը ձեռք բերելու համար։ Զարմանալի է որ Անգլիայի բարձրաստիճան եկեղեցականք և քանի մ՚ալ երևելի անձինք այսպիսի բաղդախնդիրի մը պաշտպանութիւն տուած կերևին, և պարզմտութեամբ անոր խօսքերուն հաւատ կընծայեն, վասն զի կրօնափոխութիւն ըրած է։ Այդ ինքնակոչ Աբբեպիսկոպոս Մկրտիչն իւր մայրենի եկեղեցւոյն վրայ զրպարտութիւններ ընելու ալ չէ ամչցեր, զայն իբր մոլորեալ և ապականեալ ցոյց տալով օտարազգաց և ինքզինք իբր ճշմարտութիւնը նոր գտած համարելով։ Ասով ալ գոհ չէ եղեր, և Սսոյ կաթուղիկոսութեան սիրտոսը զողցեր է։ Հարկաւ Անգլիոյ մէջ ալ ողջամիտ անձինք կարևորութիւն չեն տար այնպիսի մարդու մը, որ կրօնքն իրեն շահադիտութեան առարկայ ըրած է, և օտարներէն քանի մը ոսկի կորզելու համար դաւաճանութեամբ իւր ազգը կը զրպարտէ իբր մոլորեալ և հալածիչ։ Ցաւալի է որ ինեւտասներորդ դարուս մէջ տակաւին կրօնափոխութեան միջնադարեան սկզբունքը պաշտօնապէս քաջալերութիւն կը գտնէ։ Անգլիացիք եթէ կը կարծեն որ այսպիսի բաղդախնդիրներու ձեռքը Հայաստանեայց եկեղեցին պիտի բարենորոգի, մեծապէս կը սխալին, նախ՝ վասն զի Հայաստանեայց եկեղեցին բարենորոգման պէտք չունի. եթէ անկողմնակալ ոգով քննեն մեր ծիսարաններն ու դաւանութիւնները, պիտի տեսնեն որ ըստ ամենայնի ուղղափառ են, ինչպէս որ պատուարժան Պ. Քրիստ Անգլիացի քահանայ ալ վկայած է, և կարծեմ թէ միլիոնաւոր Հայոց ազգային զգացումը վիրաւորելով խաբեայ և կարգալոյծ բաղդախնդիր մը քաջալերելն Անգլիոյ շահուց ալ նպաստաւոր չը լինիր։

(Մասիս)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մարտի։ «Берегъ» լրագիրը հաղորդում է, որ կառավարական

սենատը արգելեց երգվեալ հաւատարմատարներին հաշտարար ժողովներին անհրաժեշտ անդամների պաշտօնը վարել և պատուաւոր հաշտարար դատաւորներ ընտրվել: «Agence Russe» հաղորդում է, որ օտար ադրիւրներից ծագած լուրերը դեսպան Օրլովի փոխանորդների մասին սխալ են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մարտի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 75 կ., երկրորդ 93 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 12 կ, ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 25 կ., երկրորդ 220 ր. 25 կ.: Արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 37 կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. 62 կ., ոսկի 7 ր. 79 կ.: Ռուսաց 1 բուրլ Լօնդոնի վրա արժէ 25,28 պէնս, ռուսաց 100 բուրլ Գերմանիայի վրա արժէ 264 մարկ. 75 պֆ. Փարիզի վրա 265 ֆր. 75 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը շատ հանդիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Յ. ՄԷԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

Մամուլի տակից դուրս եկաւ դոկտոր Բոկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը: Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Դրավաճառանոցում: Գինն է 35 կոպ.

Պ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԳՆԱԳՐՈՒԹԵԱՆ և գոյների բաղադրութեամբ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ դասեր տալ: Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, Մուխրանսկու տանը, Կլուբի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ: Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով: Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար:

1—10

Օրերումս դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Օ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում:

1. Ամսեան—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.:
2. Դոկտոր Բոկ—Ուսումն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.:
3. Գրէյդուն—Տաւիղ յիսնաղի Տփ. 80 թ. — 30 կ.:
4. Ղուկասեանց—ընդհանուր պատմութիւն հայոց զգրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.:
5. Ղամառ-Լաթիպայ—մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.:
6. Նոյնը կազմած — 25 կ.:
7. Սիլվիո Փելլիքոյի Հոխմինիացին Փրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Դանտէի Ֆրանչէսկան, Լէօփարդիի առ Իտալիան. Տարօնոյ ծերը: Ա. Մ. Ե. Պ. Տփ. 80 թ. գինը է — 70 կ.:

3—10

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Դավրօնսկի կանանց հիւանդ. Օրալեվիչ ներքին հ., Բոտնեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Բէյլս աչքի հ., Բախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդկովսկի ներքին հ., Շտեյմբօրսկի վիներական և կաշու հ., Ասատուրաթուրով կանանց հիւանդութիւններին:

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Բոտնեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Դավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուռով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտեյմբօրսկի և Ասատուրաթուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.:

Շաբաթ. Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիևսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնարոյժ Օրբելեան աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ОТЪ РАСПОРЯДИТЕЛЬНАГО КОМИТЕТА
Тифлисскаго Благотворительнаго ОБЩЕСТВА

Объявляется, что копѣечный сборъ будутъ производить въ текущемъ великомъ посту по городскимъ участкамъ: въ 1-мъ А. Е. Фролова, во 2-мъ княгиня Е. А. Гагарина и А. И. Руманская, въ 3-мъ О. А. Томичъ и Е. Н. Иванова. въ 4-мъ В. Я. Опочинина (участокъ бывшій княгини С. Я. Святополкъ-Мирской), въ 5-мъ княгиня М. Г. Меликова, въ 6 и 8-мъ княгиня В. Г. Баратова, въ 7-мъ С. П. Красноглядова и О Н. Чукмасова, въ 6-мъ княгиня О. Д. Барятинская, въ 10-мъ Фон-деръ-Нонне.

Дамы, принявшія на себя трудъ копѣечнаго сбора, будутъ ходить въ сопровожденіи околодочныхъ надзирателей.

На кружкахъ имѣются печатныя надписи на русскомъ, грузинскомъ и армянскомъ языкахъ. (131) 2—2.

Վաճառվում է նոր հրատարակված «Յիսնաղի Տաւիղ» Ֆրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրօնական գրավաճառանոցներում: Գրքոյկի Գինն է 30 կ., գաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Պ. Յովհաննէս Սուքասեանցին հեռաւեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

Դուրս եկաւ մամուլի տակից և ԾԱԼՈՎՈՒՄ է ԹԷ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ և ԹԷ Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ գրավաճառանոցներում և պ. Ծատուրեանի խանութում «ՔԵՐԹՈՒԱԾՔ և ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ, պ. Ն. ԱԴԱՄԵԱՆԻ, հրատարակութիւն Ս. Արծրունու: Գիրքը բաղկացած է 243 ԵՐԵՍՆԵՐԻՑ: Գինն է 1 ր. 25 կ.:

3—5

1. Երգնկեանց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է ներսիսեան և Գայանեան դպրոցներում. գինն է . . — ր. 20 կ.
2. Մեծատուն նանց—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց . . . . . 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց: Դիֆտերիտ բոգազացաւ . . — ր. 25 կ.
4. Բժիշկ Դ. Տէր-Գրիգորեանց—Վարակիչ հիւանդութիւններ.

(Ծաղիկ, կարմրուկ, սկարլատին, բծաւոր տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիտ, ընդհատ տենդ, խօլերայ, ղեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ)

Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապաշտպանողական միջոցներ.

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում:

8—8

Ընտանվի քարվանսարան այրվելուց յետ, նորից բացված է խստակ մոմի առևտուր Միհրեան փողոցում Արծրունու քարվանսարայում № 14. իւրաքանչիւր շաբաթ ստացվում է նոր շինուած խստակ մոմեր իմ սեփական գործարանից և որոնք վաճառվում են էժան գներով. խնդրեմ գնողներին չը թողնել իրենց այցելութիւնները:

Յովհաննէս Կուրծեան

4—4

Ստորագրութեան համար պատրաստ են «Դօն Կարլոս» (հետաքննութիւն ձշմարտութեան) Պրէսկոտի, «Արքահամ Լինկօլն» ստրուկներին ազատող Վիլհելմ Հոֆմանի, և Մոլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայ թարգմանութիւնները:

Թարգմանվում են Մոլիէրի հետ «Ցարտուֆ կամ Կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները:

Փոտրվարի 12-ից ԲԱՑՎԵՑ իշխան ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԵՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կոնֆէտներ արժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ. Օտար քաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОЙ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվին ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով. կոնֆէկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.:

13-դ ԼՅՈՐ-ԳՐԻՆԱԴԵՐԵԱՆ Նորին Մեծութեան ԳՈՒՆԴԸ խնդրում է ցանկացող անձանց ԿԱՊԱԼՈՎ վերցնել այդ գունդին ՄՍԻ և զանազան ՊԱՇԱՐԵԳԼԷՆՆԵՐԻ հասցեները, դիմել գունդին ՄԱՆԴԼԻՍ: Աճուրդը կը սկսվի ներկայ տարվայ ԱՊՐԻԼԻ 1-ին և կը շարունակվի մինչև ապրիլի 15-ը:

4—4 (2)

Տպագրութեան համար պատրաստ են «Դօն Կարլոս» (հետաքննութիւն ձշմարտութեան) Պրէսկոտի, «Արքահամ Լինկօլն» ստրուկներին ազատող Վիլհելմ Հոֆմանի, և Մոլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայ թարգմանութիւնները:

Թարգմանվում են Մոլիէրի հետ «Ցարտուֆ կամ Կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները:

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ՌՈՒՍԱՑ ԲԱՂԱՐԻ և ՀԱՒԼԱԲԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված են ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ վարձով տալու համար. ռուսաց բազարի վրա 18 համարներ և Հաւլաբարի հրապարակի վրա 40: Ցանկացողները ՎԱՐՉՈՎ վերցնել ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ հրաւիրվում են քաղաքային վարչութիւնը, որի ԴՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ ամենայն օր, բացի ուրբաթ օրերից, առաւօտեան 10 մինչև 3 ժամը երեկոյեան վարձի պայմանները կը յայտնվին:

3—3

Дозволено Цензурою 18 Марта 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона